

Թիւ 26862  
Ապրիլ 26, 1979

Հոգեշնորհ  
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Տէշիշեան  
Առաջնորդի Փոխանորդ Գանատայի  
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Թեմական Խորհուրդի Ապրիլ 20 նիստին մէջ նկատի առինք Ամենայն  
Հայոց Վեհափառ Հայրապետին հետ մեր ունեցած վերջին թղթակցութիւն-  
ները Թորոնթոյի մեր համայնքին մէջ ստեղծուած կացութեան մասին:

Սուրբ Խաչ անունով անվաւեր համայնքի մը հարցը նկատի առնելով,  
Թեմական Խորհուրդի մէջ որոշեցինք ընդառաջել Վեհափառ Հայրապետի  
թելադրութեան, եւ օրինաւոր միջոցներով հաստատել Ս. Խաչ անունով  
համայնք մը Թորոնթոյի մէջ, ենթակայ մեր Թեմական Իշխանութեան եւ  
համաձայն մեր Թեմական Կանոնադրութեան:

Ուստի, մեր հրահանգն է որ ստուգէք անուանները այն անձերուն  
որոնք ինքնամատոյց եղած էին Ս. Խաչ անունով համայնք մը կազմելու  
եւ զայն Գանատական կառավարութեան մօտ արձանագրելու: Եւ համեցէք  
զրաւոր կերպով այդ ազգայիններուն հաղորդել մեր որոշումը, եւ ի-  
րենցմէ խնդրել վաւերական օրինակները այն բոլոր խնդրագիրներուն  
եւ պաշտօնագիրներուն որոնք ներկայացուած են պետութեան մօտ, ինչ-  
պէս նաեւ այն արտօնագիրներուն որոնք տրուած են պետութեան կողմէ,  
Թորոնթոյի մէջ հաստատուած Ս. Խաչ Հայց. Եկեղեցի անունով:

Այս պաշտօնագիրները համեցէք մեզի դրկել որպէս զի Թեմական  
Խորհուրդը ճշդէ առնուելիք յաջորդական բայլերը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՊՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ